

ՊԱՊԵՆԱԿԱՆ ՈՏՆԱՆԵՏՔԵՐ



Ավերիք Իսահակյանը մի առիթով Նովհաննես Շիրազին ասել էր. «Շիրազ ջան, Օհաննեսն (Նովհաննես Թումանյան.- Ն.Պ.) ուզում էր, բայց չհասցրեց, քանի որ դու էլ Օհաննես ես, այն էլ դեռևս մարտղ աղբյուր, մարածիր մի պոեմ գրել Անիի մասին»:

Էականն այն չէ՝ Վարպեպի հորդորո՛վ գրվեց «Անի» պոեմը, թե՛ Շիրազը պարզապես չէր կարող Անիին ջանդրադառնալ: Էականն, անշուշտ, այդ պոեմի աշխարհ գալն էր՝ փառահեղ մի գործ՝ Անիի կարոտով, Անիի հանդեպ ընթերցողի մոտ բարի վերաբերմունք սերմանող զգացումներով: Յուրաքանչյուրը, ում ծանոթ է Շիրազի այդ պոեմը, Անի այցելելիս շուրթերին ունի պոեմի փողերն ու «Անիի» նախերգանքի հիման վրա գրված երգը: Դա մի փեսակ կարծես թե նախապարասություն է՝ Անի այցելողի մոտ կարգավորելու հոգեկան այն ապրումը, որ առաջանալու է երբեմնի այդ շեն քաղաքի ներկա ավեր վիճակը փեսանելուց:

Որտե՛ղ և ե՛րբ են Թումանյանն ու Իսահակյանը գրուցել Անիի մասին, և արդյո՞ք հենց Անիում եղած ժամանակ է Թումանյանն արտահայտել Անիի մասին պոեմ գրելու մտադրությունը: Ունենալի՞նք հիմա մեր գրականության երկու մեծերի այդ գրույցի սղագրությունը լիովին՝ ի՞նչ են խոսել նրանք Անիի մասին, ինչպես են նրանք կիսել իրենց փապկորությունները: Լևոն Նախվերդյանը, Իսահակյանին նվիրած իր գրքում որոշ վկայություններ փալիս է: Անգամ մի լուսանկար է փեղադրել, ուր Թումանյանն ու Իսահակյանն են պատկերված Աշոտ Ռդորմաճի փապանաքարի մոտ: Դա եղել է 1901 թվականին: Գուցե այստե՛ղ են նրանք գրուցել «Անիին ձոնված պոեմի» մասին, որ փափագել է գրել Նովհաննես Թումանյանը:

Թումանյանը մեծ ցավ է ապրել Անիի ավերակներում. «Ինչքա՛ն մարդ պիտի անբանանասուն լինի, որ ձեռք բարձրացնի այս հրաշալիքների վրա», - ասել է նա:

Այդ ապրումը, այդ ցավն ու նման զգացողությունն ամեն մեկինս է, երբ շրջում ենք Անիի սուրբ հողի վրա՝ ապրելով հայ ճարտարապետության երբեմնի փառքի վկայություններին հաղորդվելու թե՛ բերկրալի զգացումը և թե՛ կորուսյալ երկրի ցավը:



տեղեկագրի /1898թ./ Արևմտյան Նայաստանում եղել է 218 հայկական վանք և 1740 եկեղեցի: 1904թ. Պոլսո պաշտոնական տեղեկագրով, Օսմանյան Թուրքիայում եղել է 228 հայկական վանք և 1958 եկեղեցի: 1919թ. Փարիզում ստորագրված հուշագրի համաձայն Թուրքիայի տարածքում նշվում են լրիվ կամ մասամբ կործանված 83 եպիսկոպոսանիստ առաջնորդարան, 1860 եկեղեցի և մատուռ, 229 վանք:

Շարունակելի